

**«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Ռազմական ամբիոն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա <<Կրակային պատրաստության ուսուցման
առանձնահատկությունները նախազորակոչային տարիքի
երիտասարդների շրջանում>>**

Կատարող՝ Ն.Ս.ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Ղեկավար՝ Ե.Պ.ՏՈՆՈՅԱՆ

Գյումրի 2023թ.

Բովանդակություն

Ներածություն-----3

ԳԼՈՒԽ I

ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. Ձեռքի բեկորային նռնակների նշանակությունը, մարտական հատկություններն ու կառուցվածքը, նռնակների հետ վարվելիս անվտանգության կանոնները-----10

1.2. Ձեռքի բեկորային նռնակների հետ վարվելը, խնամքը և պահպանումը, նետման եղանակներն ու կանոնները-----11

1.3. Կրակային պատրաստության խնդիրները, կրակային պատրաստության պարապմունքի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան-----16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-----21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----23

Ներածություն

Թեմայի արդիականություն

Իր հինգիազարամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը մշտապես ստիպված է եղել պատերազմել, ընդ որում՝ բազմաթիվ փոխարինել է զենքով ոչ թե նվաճումներ իրականացնելու կամ հարևան երկրները ստրկացնելու, այլ իրեն տրված հայրենիքում ապրելու և զարգանալու, իր իրավունքը պաշտպանելու համար: Թեման արդիական է այնքանով, որ Հայաստանը գտնվում է հարևան երկրների հետ հակամարտությունների գոտում, շրջապատված ենք մեզ թվով մի քանի անգամ գերազանցող հակառակորդներով: Քանի որ ունենք սակավ մարդկային ռեսուրս, մեզ համար կենսական անհրաժեշտություն է որակի վրա կատարվող աշխատանքը: Այդ իսկ պատճառով ներկայիս զենքի ու զինտեխնիկայի մասին պատանհները ծանոթ են լինում դեռևս դպրոցական նստարանից: Սովորողների մեջ պետք է սերմանել այն գաղափարը, որ վաղը հաղթանակի հասնելու համար մեզանից յուրաքանչյուրը պետք է նախապատրաստվի այսօր: Սրանով իսկ բացատրել, որ յուրաքանչյուր նախագորակոչային տարիքի երիտասարդ պետք է տիրապետի զենքին, կարողանա դիպուկ կրակ վարել զենքից ու որոշակի գիտելիքներ ունենա ժամանակակից զենքի ու զինտեխնիկայի մասին նախքան բանակ զորակոչվելը: Կրակային պատրաստության դասաժամերի ընթացքում ստացված տարրական գիտելիքներն անգամ բանակում, պատերազմի դաշտում կյանքեր են փրկում, ուստի շատ կարևոր է, որ յուրաքանչյուրը անկախ սեռից ու տարիքից տիրապետի կրակային պատրաստության հմտություններին, կարողանա դիպուկ կրակ վարել զենքից և միշտ զգոն ու պատրաստ լինի դիմակայելու ցանկացած փորձության:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից հրատարակված հայկական և ռուսական գրականությունը, իրականացված հետազոտությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

:

ԳԼՈՒԽ I

ՁԵՌՔԻ ԲԵԿՈՐԱՅԻՆ ՆՈՆԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1 Ձեռքի բեկորային նռնակների նշանակությունը, մարտական հատկություններն ու կառուցվածքը, նռնակների հետ վարվելիս անվտանգության կանոնները:

Ձեռքի բեկորային նռնակների տեսակները, մարտական բնութագրերը

Ձեռքի բեկորային նռնակները նախատեսված են մերձամարտում (հարձակման և պաշտպանության ժամանակ, խրամատներում, թաքստոցներում, բնակավայրերում, անտառներում, լեռներում և այլ տեղերում) հակառակորդի կենդանի ուժը բեկորներով խոցելու համար:

ՀՀ ՋՈՒ սպառազինությունում գտնվում են՝

- Ձեռքի նռնակ ՌԳԴ-5,
- Ձեռքի նռնակ ՌԳ-42,
- Ձեռքի նռնակ Ֆ-1,
- Ձեռքի նռնակ Ջ-1:

Նռնակները կախված բեկորների թռագրման հեռավորությունից լինում են՝ **հարձակողական և պաշտպանողական:**

ՌԳԴ-5 և ՌԳ-42 ձեռքի նռնակները հարձակողական են, իսկ Ֆ-1 նռնակը՝ պաշտպանողական Ջ-1 նռնակը՝ պաշտպանողական-հարձակողական:

Ձեռքի բեկորային նռնակները համալրված են ձեռքի նռնակի միասնականացված (ծևափոխված) բռնկիչներով /ՄՁԲ/:

Բռնկիչի հրապատիճը բոցավառվում է նռնակի նետման պահին, իսկ պայթյունը կատարվում է նետումից 3,2-4,2 վրկ հետո:

ՌԳԴ-5, ՌԳ-42, Ֆ-1, և Ջ-1 նռնակները անխափան պայթում են ցեխի, ձյան, ջրի մեջ, ինչպես նաև այլ տեղերում ընկնելիս: Պայթյունի ժամանակ առաջանում են մեծ քանակությամբ բեկորներ, որոնք թռչում են տարբեր կողմեր: ՌԳԴ-5 և ՌԳ-42 նռնակների բեկորներն օժտված են մինչև 25 մ շառավիղով կենդանի ուժի խոցման էներգիայով, իսկ Ֆ-1 նռնակինը մինչև 200մ:

Հայաստանի Հանրապետության արտադրության Ջ-1 նռնակը նախատեսված է մարտական պայմաններում հակառակորդի կենդանի ուժի խոցման համար: Նռնակի խոցման շառավիղը 7 մ է:

ՌԿԳ-3 ձեռքի կուտակային (կուժուլյատիվ) նռնակը հակատանկային է և նախատեսված է

տանկեր ու զրահապատ այլ նշանակետեր (ինքնագնաց-հրետանային կայանք, զրահափոխադրիչ, զրահամեքենա և այլն) շարքից հանելու, ինչպես նաև դաշտային ամուր տիպի պատնեշներ ու թաքստոցներ քանդելու համար:

Ձեռքի կուտակային նռնակը նպատակակետին (կարծր արգելք) հասնելիս ակնթարթորեն պայթում է, առաջացած գազերը կուտակային ձագարափոսի շնորհիվ հավաքվում կազմում են նեղ խուրձ, որն ընդունակ է ճեղքել ժամանակակից տանկի զրահը, նրա ներսում ոչնչացնել անձնակազմը և սարքավորումները: Նռնակի գործողությունը առավել արդյունավետ է, երբ այն նշանակետին հարվածում է հատակով: Նռնակի հատակով դեպի առաջ թռիչքի ուղղությունը ապահովում է կայունարարը:

Նռնակի համեմատաբար ոչ մեծ զանգվածը վարժված զինվորին թույլ է տալիս նետել՝

- Բեկորայինը՝ 40-50 մ,
- Հակատանկայինը՝ 15-20 մ:

ՌԳԴ-5 ձեռքի բեկորային նռնակի նշանակությունը, մարտական հատկություններն ու կառուցվածքը

ՌԳԴ-5 ձեռքի բեկորային նռնակը հեռագործ (դիստանցիոն գործողության) նռնակ է և նախատեսված է հակառակորդի կենդանի ուժի ոչնչացման համար ինչպես հարձակաման ժամանակ այնպես էլ՝ պաշտպանվելիս: Նռնակի նետումը կատարվում է տարբեր կերպ՝ հետիոտն կարգով և զրահափոխադրիչներից (մեքենաներից):

ՌԳԴ-5 ձեռքի բեկորային նռնակի մարտական հատկություններն են՝

- Նռնակի մահաբեր բեկորների թռիչքի շառավիղը՝ շուրջ 25 մ է,
- Նռնակի նետման միջին հեռավորությունը՝ 40-50 մ է,
- Լիցքավորված նռնակի զանգվածը՝ 310 գրամ է,
- Բռնկիչի դանդաղեցուցիչի այրման ժամանակը՝ 3,2-4,2 վրկ է:

Ձեռքի բեկորային ՌԳԴ-5 նռնակը բաղկացած է՝

- բռնկիչի խողովակով պատյանից,
- պայթուցիկ լիցքից
- բռնկիչից:

Նռնակի պատյանը նախատեսված է պայթուցիկ լիցքի և բռնկիչի փողակի տեղադրման համար: Այն բաղկացած է վերին ու ստորին մասերից և ներառում է արտաքին պատյանն ու ներդրակը՝ որոնցից պայթյունի ժամանակ առաջանում են բեկորներ: Պատյանի վերին մասը բաղկացած է արտաքին թաղանթից, որը կոչվում է *թասակ*, և թասակի ներդրակից: Վերին մասի խցողակի միջով միացվում է բռնկիչի փողակը, որը նախատեսված է բռնկիչը նռնակին միացնելու և պատյանում պայթուցիկ լիցքի հերմետիկացման համար: *Փողակը* կեղտոտվելուց պահպանելու համար նրա մեջ ներպտուտակվում է պլաստմասսայե խցան: Նռնակը նետման նախապատրաստելիս խցանի փոխարեն փողակի մեջ ներպտուտակվում

է բռնկիչ:

Պատյանի ստորին մասը բաղկացած է արտաքին թաղանթից, որը կոչվում է տակդիր, և տակդիրի ներդրակից:

Պայթուցիկ լիցքը լցված է պատյանի մեջ ու նախատեսված է նռնակը պայթեցնելու, բեկորներ առաջացնելու համար:

Նռնակի միասնականացված (ծնափոխված) բռնկիչը (ՄՁԲ) նախատեսված է պայթուցիկ լիցքի պայթեցման համար: Բաղկացած է հարվածող մեխանիզմից և բուն բռնկիչից: Հարվածող մեխանիզմը նախատեսված է բռնկիչի հրապատիճ-բոցավառիչի բոցավառման համար: Բաղկացած է`

- Հարվածող մեխանիզմի փողակից,
- Կցորդիչ ականոցից,
- Ուղղորդիչ տափօղակից,
- Մարտական զսպանակից,
- Ջարկանի տափօղակից,
- Ջգանալծակից,
- Օղակավոր ապահովիչ ճուլկիից:

Հարվածող մեխանիզմի փողակի վրա հավաքվում են բռնկիչի բոլոր մասերը: **Կցորդիչ ականոցը** բռնկիչը միացնում է նռնակի պատյանին: Այն հագցված է հարվածող մեխանիզմի փողակի ներքևի մասին:

Ուղղորդիչ տափօղակը ծառայում է որպես հենակ մարտական զսպանակի վերին ծայրի համար, ուղղություն է տալիս զարկանի շարժմանը և ամրացված է հարվածող մեխանիզմի փողակի վերին մասին:

Մարտական զսպանակը նախատեսված է զարկանին հրապատիճ-բոցավառիչը ծակելուն անհրաժեշտ էներգիա հաղորդելու համար: Այն հագցված է զարկանին և իր վերին մասով հենված է ուղղորդիչ տափօղակին, իսկ ներքին մասով` զարկանի տափօղակին: Ջարկանը նախատեսված է հրապատիճ-բոցավառիչը ծակելու և բոցավառելու համար: Այն գտնվում է հարվածող մեխանիզմի փողակի մեջ:

Ջարկանի տափօղակը հագցված է զարկանի ներքևի մասի վրա ու հենակ է ծառայում մարտական զսպանակի ներքևի ծայրի համար:

Ջգանալծակը նախատեսված է զարկանը քաշված վիճակում (մարտական զսպանակը սեղմված է) պահելու համար:

Օղակավոր ապահովիչ ճուլկին պահում է ձգանալծակը հարվածող մեխանիզմի փողակի վրա: Այն անցնում է ձգանալծակի բլթանցքի ակոսների և հարվածող մեխանիզմի փողակի պատերի միջով: Ապահովիչը հանելու համար օգտվում են օղակից:

Բուն բռնկիչը նախատեսված է նռնակի պայթուցիկ լիցքի պայթեցման համար: Բաղկացած է՝

- Դանդաղիչի ականոցից,
- Հրապատիճ-բոցավառիչից,
- Դանդաղիչից,
- հրապատիճ-ձայթիչից:

Դանդաղիչի ականոցը վերին մասում ունի պարուրակ՝ հարվածող մեխանիզմի փողակին միացնելու և խորշ՝ հրապատիճ-բոցավառիչի տեղադրման համար, ներսում՝ անցք, ուր տեղադրվում է դանդաղիչը, արտաքին կողմից՝ փորակ, հրապատիճ-ձայթիչի պարկուճի միացման համար:

Հրապատիճ-բոցավառիչը նախատեսված է դանդաղիչի բոցավառման համար:

Դանդաղիչը հրաշիթը հասցնում է հրապատիճ-բոցավառիչից հրապատիճ-ձայթիչին: Իրենից ներկայացնում է խտացված սակավազագային բաղադրություն:

Հրապատիճ-ձայթիչը նախատեսված է խտացված պայթուցիկ լիցքը պայթեցնելու համար և տեղադրված է դանդաղիչի ականոցի ներքևի մասում ամրացված պարկուճի մեջ:

Բռնկիչները մշտապես գտնվում են մարտական պատրաստ վիճակում: *Կտրականապես արգելվում է քանդել բռնկիչը և ստուգել հարվածող մեխանիզմի աշխատանքը:*

ՌԳ-42 բեկորային նռնակի նշանակությունը, մարտական հատկություններն ու կառուցվածքը
ՌԳ-42 ձեռքի բեկորային նռնակը հեռագործ գործողության նռնակ է, որը նախատեսված է թե՛ հարձակման, թե՛ պաշտպանության ժամանակ հակառակորդի կենդանի ուժի խոցման համար: Նռնակի նետումը կատարվում է տարբեր դիրքերից, ինչպես հետիոտն գործողություններում, այնպես էլ զրահափոխադրիչի (ավտոմեքենայի) վրայից:

ՌԳ-42 ձեռքի բեկորային նռնակի մարտական հատկություններն են՝

- Նռնակի մահաբեր բեկորների թռիչքի շառավիղը՝ շուրջ 25 մ է,
- Նռնակի նետման միջին հեռավորությունը՝ 30-40 մ է,
- Լիցքավորված նռնակի զանգվածը՝ 420 գրամ է,
- Բռնկիչի դանդաղեցուցիչի այրման ժամանակը՝ 3,2-4,2 վրկ է:

Ձեռքի բեկորային ՌԳ-42 նռնակը բաղկացած է՝

- Բռնկիչի փողակով պատյանից,
- Մետաղյա ժապավենից,
- Պայթուցիկ լիցքից,
- Բռնկիչից:

Նռնակի պատյանը նախատեսված է պայթուցիկ լիցքի, մետաղյա ժապավենի, բռնկիչի փողակի տեղավորման, ինչպես նաև՝ պայթելիս բեկորների վերածվելու համար: Պատյանը գլանաձև է, ունի հատակ ու կափարիչ: Կափարիչին ամրացվում է կցաշուրթով փողակը՝

բռնկիչը նռնակին միացնելու և պատյանում պայթուցիկ լիցքի հերմետիկացման համար:
Նռնակի պահպանման և տեղափոխման ժամանակ փողակը փակվում է այլ պլաստմասսայե խցանով կամ մետաղյա թասակով:

Մետաղյա ժապավենը նախատեսված է նռնակը պայթեցնելու ժամանակ բեկորներ առաջացնելու համար, 3-4 շերտով այն փաթաթված է պատյանի ներսում: Բեկորների քանակը ավելացնելու համար ժապավենի մակերեսը բաժանված է քառակուսիների:

Պայթուցիկ լիցքը լցնում է պատյանը և ծառայում է նռնակը բեկորների վերածելուն:

ՍԶԲ նռնակի բռնկիչը նախատեսված է նռնակի պայթուցիկ լիցքի պայթեցման համար:

Ֆ-1 ձեռքի բեկորային նռնակի նշանակությունը, մարտական հատկություններն ու կառուցվածքը

Ֆ-1 նռնակը (տես հավելված 8 նկ.9) ստեղծվել է Ֆրանսիական 1915 թվականի F-1 նռնակների հիման վրա, որից էլ ստացել է իր անունը: Նռնակի մշակումը սկսվել է 1925 թվականից: 1927-ին այն թողարկվեց և մտավ զինված ուժեր: Նռնակի իրանը ֆրանսիական տարբերակի ավելի կատարելագործված տարբերակն էր, իսկ որպես բռնկիչ օգտագործվում էր Կովեշնիկովի բռնկիչը: Հետագայում նռնակի իրանը կատարելագործվեց: 1942 թվականին բռնկիչը փոխարինվեց Y3PГ բռնկիչով:

Ֆ-1 ձեռքի հակահետևակային պաշտպանողական նռնակ՝ օգտագործվում է պաշտպանողական մարտում կենդանի ուժը վերացնելու համար: Խոցում է պայթյունից առաջացած բեկորներով: Ժողովրդի մեջ ծանոթ է որպես «Լիմոնկա» (*ռուս. ЛИМОНКА*), քանի որ իր արտաքին տեսքով շատ նման է կիտրոնի: Շրջանառության մեջ է մտել 1927 թվականին:

Ֆ-1 ձեռքի բեկորային նռնակը հեռագործ գործողության նռնակ է, որը նախատեսված է գերազանցապես պաշտպանական մարտում կենդանի ուժի ոչնչացման համար: Այն կարելի է նետել տարբեր դիրքերից և միայն թաքստոցից, զրահափոխադրիչից կամ տանկից (ինքնազնաց հրետանային կայանքից):

Ֆ-1 ձեռքի բեկորային նռնակի մարտական հատկություններն են՝

- Բեկորների վնասման շառավիղը՝ մոտ 200մ
- Նետման միջին հեռավորությունը՝ 35-45 մ
- Լիցքավորված նռնակի քաշը՝ 600 գրամ է
- Բռնկիչի դանդաղեցուցիչի այրման ժամանակը՝ 3,2-4,2 վայրկյան է:

Ինչպես նռնակների մեծամասնությունը Ֆ-1 նռնակը կազմված է 3 մասից՝

- Բռնկիչ, ժամանակակից Ֆ-1 նռնակների վրա օգտագործվում են Y3PГ կամ Y3PГM բռնկիչները, որոնք կարող են նաև օգտագործվել ՌԴԳ-5 և ՌԳ-42 ձեռքի նռնակների վրա:

- Պայթուցիկ լիցք ` Ֆ-1 նռնակներում օգտագործվում է 60 գ տրոտիլ:
- Մետաղյա իրան (պատյան)` պատրաստվում է ձուլման ճանապարհով` թուջից:

Նռնակի պատյանը նախատեսված է պայթուցիկ լիցքի և բռնկիչի տեղավորման, ինչպես նաև` նռնակի պայթեցման ժամանակ բեկորների վերածվելու համար: Նռնակի պատյանը չուգունից է (թուջ), երկայնակի և լայնակի ակոսներով` այդ ակոսներով էլ նռնակը սովորաբար պայթում-վերածվում է բեկորների: Պատյանի վերին մասում բռնկիչը ներպտուտակելու համար կա ակոսավոր անցք: Նռնակի պահպանման և տեղավորման համար այդ անցքի մեջ ներպտուտակվում է պլաստմասսայե խցան:

Պայթուցիկ լիցքը լցնում է պատյանը և ծառայում է նռնակը բեկորների վերածելուն:

Ջ-1 ձեռքի բեկորային նռնակի նշանակությունը, մարտական հատկություններն ու կառուցվածքը

Ջ-1 ձեռքի բեկորային նռնակը հեռագործ գործողության նռնակ է, որը նախատեսված է պաշտպանական և հարձակողական մարտում հակառակորդի կենդանի ուժի խոցման համար: Նռնակի նետունը կատարվում է տարբեր դիրքերից` հետիոտն և զրահափոխադրիչների (մեքենաների) վրա գործելիս:

Ջ-1 ձեռքի բեկորային նռնակի մարտական հատկություններն են`

- Նռնակի խոցելիության շառավիղը` 7 մ
- Լիցքավորված նռնակի քաշը` 350 գր է
- Բռնկիչի դանդաղեցուցիչի այրման ժամանակը` 3,2-4,2 վայրկյան է:

Գլխիկը չի կարելի օգտագործել այլ տեսակի նռնակների համար:

Ջ-1 ձեռքի բեկորային նռնակը բաղկացած է`

- Պատյանից,
- Պայթուցիկ լիցքից,
- Պայթուցիչից:

Նռնակի պատյանը ծառայում է պայթուցիկ լիցքի, բռնկիչի խողովակի տեղավորման, ինչպես նաև` նռնակը պայթելիս բեկորների գոյացման համար:

Պայթուցիկ լիցքը լցնում է պատյանը և նախատեսված է նռնակը պայթեցնելու ու բեկորների վերածելու համար:

Պայթուցիչը նախատեսված է նռնակի պայթուցիկ լիցքը պայթեցնելու համար:

1.2 Ձեռքի բեկորային նռնակների հետ վարելը, խնամքը և պահպանումը

Նռնակները գործեր են հասցվում փայտե արկղերով: Արկղերում նռնակները, բռնակները և բռնկիչները դասավորում են մետաղյա տուփերի մեջ: Տուփերը բացելու համար նախատեսված է դանակ: Արկղի կողքերին և կափարիչին պիտակ կա, ուր նշվում է նռնակների քանակը արկղում, կշիռը, նռնակների և բռնկիչների անվանումը, արտադրող գործարանի համարը, պատրաստման տարեթիվը և վտանգավորության նշանը:

Նռնակների և բռնկիչների ողջ պաշարը, բացի կրովիներից, պահել գործարանային փաթեթավորմամբ:

Ջինվորները նռնակները տեղափոխում են նռնակային պայուսակներով: Բռնկիչները պայուսակում տեղադրվում են նռնակներից առանձին, ընդ որում յուրաքանչյուր բռնկիչ պետք է փաթաթվի թղթով կամ մաքուր հնոտիով: Տանկերի (գրահափոխադրիչների, ինքնագնաց հրետանային կայանքների) մեջ նռնակները և դրանցից առանձնացված բռնկիչները տեղադրվում են պայուսակում: Նռնակային պայուսակում նռնակները և բռնկիչները դասավորելուց-լիցքավորելուց առաջ զննվում-ստուգվում են: Ստուգման ժամանակ ուշադրություն դարձնել այն բանին, որ նռնակի իրանը չունենա խոր փոսվածք և ժանգապատում, բռնկիչի փողակը աղտոտված չլինի և չունենա միջանցիկ վնասվածք, բռնկիչը լինի մաքուր և չլինի ծռմռված (ճմլված), ապահովիչ ճուլկիի ծայրերը բացված լինեն և ծալվածքների վրա ճաքեր չունենան: Ճաքերով կամ կանաչ բարակ շերտով պատած բռնկիչներն օգտագործման համար պիտանի չեն:

Նռնակները և բռնկիչները զերծ պահել ուժեղ ցնցումներից, հարվածներից, կրակից, կեղտից և խոնավությունից: Եթե նրանք կեղտոտված կամ խոնավացած են, առաջին իսկ հնարավորության դեպքում նռնակները մանրակրկիտ սրբել և չորացնել արևի տակ կամ տաք միջավայրում, սակայն ոչ կրակին մոտ: Նռնակների չորացումը անպայման իրականացվում է հսկողությամբ: Նռնակային պայուսակներում երկար ժամանակ պահվող նռնակները հարկավոր է պարբերաբար ստուգել: Անսարք նռնակները և բռնկիչները հանձնվում են պահեստ՝ ոչնչացման համար:

Նռնակը լիցքավորել (բռնկիչը տեղադրել) թույլատրվում է միայն նետելուց առաջ: Մարտական նռնակները տալ միայն դրանց հետ վարվել իմացողներին: *Արգելվում է քանդել մարտական նռնակները և վերացնել անսարքությունները, տեղափոխել առանց պայուսակի (ապահովիչ ճուլկիի օղակից կախված), ինչպես նաև՝ ձեռք տալ չպայթած նռնակներին:*

Նռնակների կառուցվածքը, դրանց նետման եղանակներն ու կանոնները ուսումնասիրելու համար օգտվել ուսումնական նռնակներից և պլակատներից: *Մարտական նռնակներ նետել թույլատրվում է ուսումնական, ուսումնանմանակման նռնակներ նետելու վարժությունները հաջողությամբ կատարած զինծառայողներին:* Մարտական նռնակների նետման ուսուցման ժամանակ պետք է պահպանել նախազգուշական հետևյալ միջոցները՝

- Սովորողները պետք է լինեն պողպատե սաղավարտով,
- Լիցքավորելուց առաջ զննել նռնակը և բռնկիչը, անսարքություն հայտնաբերելիս զեկուցել հրամանատարին,
- Բեկորային պաշտպանողական և հակատանկային նռնակների նետումը իրագործել խրամատներից կամ բեկորների համար անխոցելի թաքստոցներից՝ սպայի ղեկավարությամբ,
- Մեկի կողմից մի քանի նռնակ նետելու դեպքում, յուրաքանչյուր հաջորդը նետել նախորդ նռնակի պայթյունից 5 վրկ հետո,
- Եթե նռնակը չի նետված (ապահովիչ ճուլկիի դուրս չգալու պատճառով), ապա լիցքաթափումը իրականացվում է միայն հրամանատարի անմիջական հսկողությամբ և հրամանով,
- Հաշվառել չպայթած նռնակները և կարմիր դրոշակներով նշել նրանց անկման վայրը, նետումն ավարտելուց հետո չպայթած նռնակները ոչնչացնել նռնակների անկման վայրերի պայթեցումով, համաձայն այն կանոնների, որոնք շարադրված
- են զորքերում հրետանային սպառազինության ռազմամթերքի պահպանման ուղեցույցներում, նռնակների (բռնկիչների) պայթեցումը կազմակերպում է զորամասի հրամանատարը,
- Ձեռքի նռնակների նետման շրջանն օղակել 300 մ ոչ պակաս շառավիղով,
- Այն անձնակազմը, որը չի զբաղված նռնակ նետելով, տարվում է թաքստոց կամ էլ կրակային բնագծից անվտանգ հեռավորության վրա 350 մ ոչ պակաս,
- Նռնակների նետման ելման դրությունը նշել սպիտակ, իսկ կրակային բնագիծը՝ կարմիր դրոշակներով,
- Նռնակների և բռնկիչների հանձնման կետը պետք է հիմնել թաքստոցում, ելման դրությունից ոչ պակաս 25 մ հեռավորությամբ:

Ձեռքի նռնակների նետման եղանակներն ու կանոնները

Պարապմունքների և զորավարժությունների ժամանակ նռնակների նետումը կատարվում է հրամանատարի հրամանով, իսկ մարտում՝ կախված իրավիճակից՝ հրամանով կամ ինքնուրույն: Պարապմունքների կամ զորավարժությունների ժամանակ մարտական նռնակներ նետելիս պահպանել անվտանգության կանոնները, ինչը կբացառի նետողի և հարևանների խոցումը: Ընթացքից հարձակողական նռնակը նետելուց հետո կանգ չառնել, պատրաստվել հրաձգության և շարունակել ընթացքը: Պաշտպանողական և հակատանկային նռնակը նետելուց հետո անմիջապես թաքնվել, իսկ պայթյունից հետո

արագ պատրաստվել հրաձգության կամ էլ շարժվել առաջ: Զրահավոխադրիչով գործողության դեպքում նետողը պայթյունից հետո հրակնատից պատսպարվում է հրաձգության:

Մարտում ձեռքի նռնակների նետումը կատարվում է տարբեր դիրքերից՝

- Կանգնած,
- Ծնկած,
- Պառկած,
- Ընթացքից՝ զրահավոխադրիչներից և հետիոտն (միայն հարձակողական նռնակները):

Նռնակը նետելու համար պետք է ընտրել այնպիսի տեղ և դիրք, որն ապահովի դեպի նշանակետ նռնակի ազատ թռիչքը (ձանապարհին արգելքներ չկան՝ ծառերի ճյուղեր, բարձրացողուն խոտեր, մետաղալարեր և այլն): Նռնակը պետք է նետել եռանդագին՝ հաղորդելով նրան թռիչքի առավելագույն նպաստավոր հետագիծ:

Նռնակի նետումը բաղկացած է հետևյալ տարրերից (գործողություններից)՝ նռնակը նետելուն պատրաստելը (նռնակի լիցքավորումը, դիրքի ընդունումը), նռնակի նետումը:

Նռնակի լիցքավորումն իրականացվում է՝ «նախապատրաստել նռնակը» հրամանով, իսկ մարտում, բացի այդ նաև ինքնուրույն: Լիցքավորման համար անհրաժեշտ է նռնակը հանել պայուսակից, ապապտուտակել խցանը իրանի փողակից և ներպտուտակել բռնկիչը (տես հավելված 8 Նկ. 14): Նռնակը պատրաստ է նետման:

Նռնակների նետումն իրականացվում է՝ «նռնակով-կար՛կ» կամ «խրամուղիների՛ն, նռնակներով-կրա՛կ» հրամանով, իսկ մարտում, բացի այդ՝ նաև ինքնուրույն:

Նռնակի նետման համար անհրաժեշտ է՝

- Պահել նռնակը ձեռքում և մատներով ձգանալժակը պինդ սեղմել նռնակի իրանին,
- Շարունակելով պինդ սեղմել ձգանալժակը՝ մյուս ձեռքով սեղմել (ուղղել) ապահովիչ ճուլկիի ծայրերը և օղակից մատներով քաշելով հանել այն բռնկիչից,
- Թափ առնել և նռնակը նետել նշանակետին, պաշտպանողական նռնակը նետելուց հետո թաքնվել:

Այս դեպքում զենքը պետք է գտնվի գործողությանը անմիջապես նախապատրաստվելն ապահովող դիրքում (ծախ ձեռքում «Կրծքին ա՛ռ» դիրքում, խրամատի հողապատնեշի վրա և այլն):

Կանգնած տեղից նռնակը նետելիս հարկավոր է դեմքով կանգնել դեպի նշանակետը, նռնակը վերցնել աջ , իսկ զենքը՝ ձախ ձեռքը և քաշել ապահովիչ ճուլկին, աջ ոտքով կատարել մեկ քայլ ետ, ծնկածալումով և, իրանը աջ շրջելով նռնակը աղեղնաձև իջեցնել

ներքև ու ետ, արագ ուղղել աջ ոտքը և դառնալով կրծքով դեպի նշանակետը, տանել այն ուսի վրայով ու դաստակի լրացուցիչ հրումով նետել նռնակը: Նետման պահին մարմնի ծանրությունը տեղափոխել ձախ ոտքի վրա, զենքը թափով տանել ետ:

Նռնակը ծնկած դիրքից նետելիս ընդունել ծնկած դիրքից կրակելու դրություն, աջ ձեռքում պահելով նռնակը, ձախում` զենքը, քաշել-հանել ապահովիչ ճուլկին, ձեռքը թափով բարձրացնել, իրանը թեքելով ետ և դեպի աջ, բարձրանալ և ուսի վրայով նետել նռնակը, շարժման ավարտին, կտրուկ հակվելով ձախ ոտքին:

Պառկած դիրքից նռնակը նետելիս ընդունել պառկած դիրքից կրակելու դրություն, զենքը դնել գետնին և նռնակը վերցնել աջ ձեռքը: Ձախ ձեռքով հանել ապահովիչ ճուլկին և, ձեռքերով հենվելով գետնին, հրվել: Աջ ոտքը թեթևակի տեղաշարժելով ետ, բարձրանալ ձախ ծնկին (չտեղաշարժելով այն)` միաժամանակ թափով բարձրացնելով աջ ձեռքը: Ուղղելով աջ ոտքը, կրծքով դեպի նշանակետ դառնալ և, հրվելով առաջ, նետել նռնակը նշանակետին, վերցնել զենքը և պատրաստվել հրաձգության:

Քայլով կամ վազքով ընթացքից նռնակը նետելիս հարկավոր է` պահել նռնակը կիսածալված աջ ձեռքում, իսկ զենքը` ձախում, հանել ապահովիչ ճուլկին, ձախ ոտքի վրա նռնակով ձեռքը տանել առաջ և ներքև, երկրորդ քայլին (աջով) ձեռքը շարունակում է աղեղնածև շարժումը ներքև, դեպի ետ, իրանի միաժամանակյա աջ շրջումով, երրորդ քայլին, ձախ ոտնաթաթը դնել նշանակետի ուղղությամբ և աջ ոտքի ծնկածալումով ավարտել իրանի դարձումը և ձեռքի թափահարումը: Օգտագործելով շարժման արագությունը և հետևողականորեն նետմանը հավելելով ոտքերի, իրանի ու ձեռքերի ուժը, նետել նռնակը` տանելով այն ուսի վրայով:

Նռնակը զրահափոխադրիչի վրայից նետելիս հարկավոր է մնալով նստատեղին կամ երկու ոտքով (նաև աջով, ձախ ծնկով նստատեղին) կանգնել հատակին, աջ ձեռքով վերցնել նռնակը, ձախով` զենքը, քաշել հանել ապահովիչ ճուլկին: Ձախ ձեռքով զենքը պահել զրահափոխադրիչից դուրս, բարձրանալ և միաժամանակ նռնակով կատարել թափահարում, իրանը զգելով ետ և թեքելով դեպի աջ, նռնակը նետել նշանակետին, տանելով այն ուսի վրայով և կտրուկ հակվել առաջ, թաքնվել զրահափոխադրիչի ետևը: Եթե զրահափոխադրիչը ծածկ ունի, նռնակը նետելուց առաջ հարկավոր է այն բացել, իսկ նետումից հետո` փակել: Եթե նռնակի նետումը կատարվում է շարժվող զրահափոխադրիչից, ապա նետման ուղղության և պահի ընտրության ժամանակ հաշվի է առնվում մեքենայի շարժման հետ կապված ճշգրտումները: Նռնակը առաջ կամ ետ նետելիս, զրահափոխադրիչի շարժման ժամանակ, թռիչքի հեռավորությունը մեծանում է կամ էլ փոքրանում, ուստի նռնակը անհրաժեշտ է նետել ոչ թե նշանակետին, այլ նշանակետին 7-10 մ մոտ (հեռու) կետին, եթե մինչ նշանակետը 30-50 մ է:

Մոտավորապես ուղիղ անկյան տակ գտնվող նշանակետը խոցելու համար, որը գրահափոխադրիչի շարժման ուղղությամբ 30-35 մ հեռավորության վրա է, նռնակը անհրաժեշտ է նետել նշանակետին, սակայն 7-10 մ աջ (կամ ձախ)՝ գրահափոխադրիչի աջ (ձախ) կողմից նետելու դեպքում: Եթե նռնակի նետումը իրականացվում է կարճ տարածության վրա և սուր (բութ) անկյան տակ, գրահափոխադրիչի շարժման ուղղությամբ ուղղումը կրկնակի քիչ վերցնել, այսինքն՝ 3-5 մ:

Առավել նպատակահարմար է շարժվող գրահափոխադրիչից նռնակը նետել խրամուղում գտնվող նշանակետի վրա՝

- Երբ գրահափոխադրիչը մոտենում է խրամուղուն կամ անցնելու է այն և գտնվում է շարժման ուղուն ուղղահայաց դիրքով դիրքով (ոչ ավել 6-8 մ-ից),
- Երբ գրահափոխադրիչը մոտենում է նշանակետին նետման միջին հեռավորության չափով, խրամուղուց 15-20 մ վրա և գտնվում է շարժման ուղուն զուգահեռ դիրքով:

Նռնակը խրամուղուց կամ խրամատից նետելու համար պետք է՝ զենքը դնել հողապատնեշին, նռնակը վերցնել աջ ձեռքը և հանել ապահովիչ ճուլկին, աջ ոտքը տանել (որքան հնարավոր է) ետ, մեջքը կորացնելով և թեթևակի ծալելով զույգ ոտքերը, նռնակով աջ ձեռքը մինչև վերջ տանել վերև ու ետ հենվելով ձախ ձեռքին, կտրուկ ուղղվել և նռնակը նետել նշանակետին, որից հետո թաքնվել խրամուղում (խրամատում):

Խրամատում (խրամուղում) կամ վազ տեղանքում տեղակայված հակառակորդի կենդանի ուժի ոչնչացման համար նռնակը հորիզոնի համեմատ նետել մոտավորապես 35-45° անկյան տակ, որպեսզի նռնակը նշանակետին հասնի «կախովի» և, քիչ գլորվելով չհեռանա անկման վայրից: Շենքերի լուսամուտներին և դռներին (պատերի փլվածքներից) նռնակ նետելիս պահանջվում է դիպուկ խփել դրանց, ուստի նռնակի թռիչքի հետագիծը պետք է ուղղված լինի ուղիղ նշանակետին: Այս կարգի նշանակետին նռնակի ճիշտ դիպչելուն հասնում են երկարատև ու պարբերական մարզումների շնորհիվ: Նռնակը նետելուց հետո անհրաժեշտ է, որ նետողը արագ թաքնվի, քանի որ վրիպելիս կարող է խոցվել բեկորներից: Եթե նռնակը չի նետվել, բռնկիչից դուրս չի եկել ապահովիչ ճուլկին, այն լիցքաթափվում է հրամանատարի հսկողությամբ:

«Լիցքաթափել նռնակը» հրամանով բռնկիչը ապապտուտակվում է, փաթեթավորվում է հնոտիով (թղթով) և տեղադրվում նռնակային պայուսակի մեջ, իրանի փողակի մեջ ներպտուտակվում է խցանը, և նռնակը տեղադրվում է պայուսակում:

Ձեռքի կուտակային նռնակի նետման եղանակներն ու կանոնները

Ձեռքի կուտակային նռնակի նետումը բաղկացած է հետևյալ գործողություններից՝ նախապատրաստվելը (նռնակի լիցքավորումը և դիրք ընդունելը) և նռնակը նետելը:

Նռնակի լիցքավորումը կատարվում է «Պատրաստել կուտակային նռնակները» հրամանով, իսկ մարտում, բացի այդ՝ նաև ինքնուրույն: Այդ հրամանով անհրաժեշտ է՝

- Նռնակը վերցնել ձախ ձեռքը, բռնակը ապապտուտակել իրանից և այն դնել պայուսակի մեջ կամ փռոցին,
- Բռնկիչը տեղավորել նռնակի պատյանի կափարիչի փողակի մեջ,
- Բռնակը մինչև վերջ պտուտակել նռնակի պատյանին, նռնակը պատրաստ է նետման:

Կուտակային նռնակների նետումը իրականացվում է «Տանկին, կուտակային նռնակներով-կրակ» հրամանով կամ ինքնուրույն, եթե տանկը մոտենա նռնակի նետման համար տանկի մերձեցման հեռավորության հաշվով: Նետելու համար անհրաժեշտ է՝

- Նռնակի բռնակից բռնել աջ ձեռքով (ձախլիկները՝ ձախով) այնպես, որ ծալովի ձողիկը ձեռքի մատներով ամուր սեղմված լինի բռնակին,
- Նշված դրությամբ պահելով նռնակը՝ ուղղել ապահովիչ ճուլկիի ծայրերը, ձախ ձեռքի մատներով օղակից քաշելով հանել այն բռնակից,
- Նռնակը թափով նետել նշանակետին, որից հետո անմիջապես թաքնվել:

Նռնակը խրամատից կանգնած կամ ծնկած նետելիս պետք է գենքը դնել հողապատնեշին, նռնակը վերցնել աջ ձեռքը և հանել ապահովիչ ճուլկին, գոտկատեղից կռանալով և շրջելով իրանը աջ, նռնակով ձեռքը մինչև վերջ տանել կողքի ու ետ, ձախ ձեռքով հենվելով խրամատի հողապատնեշին, կտրուկ ուղղվել և նռնակը թափով նետել նշանակետին, հաղորդելով նրան թռիչքի սահուն հետագիծ:

Նռնակը պառկած դիրքից նետելիս անհրաժեշտ է նետման պահին բարձրանալ ձախ ծնկի վրա:

Կողային քամու առկայության դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել նետման ուղղությունից հակատանկային նռնակի շեղումը, իսկ շարժվող թիրախի վրա նռնակը նետելիս առաջանշանառել, որպեսզի ստացվի թիրախի ճշգրիտ խոցում: Թևերից շարժվող տանկի խոցման համար առաջանշանառել իրանի 0,5 չափով, այսինքն՝ նռնակը ուղղել տանկի քթամասին:

Եթե նռնակը չի նետվել, այն լիցքաթափվում է հրամանատարի հսկողությամբ: «Լիցքաթափել՝ կուտակային նռնակը» հրամանով տեղադրել ապահովիչ ճուլկին (եթե այն հանված է) և բաժանել, ծալել ծայրերը, ապապտուտակել բռնակը նռնակի իրանից, բռնկիչը հանել իրանի կափարիչի բնիկից, փաթաթել այն հոտիով և տեղավորել պայուսակի գրպանում, նռնակի կափարիչին պտուտակելով հագցնել բռնակը և տեղավորել պայուսակում:

Այսպիսով՝ ձեռքի բեկորային նռնակների տեսակների, մարտական բնութագրերի, անվտանգության կանոնների ուսուցման առանձնահատկություններն ու փոխադարձ կապի գիտակցումը նախնական զինվորական պատրաստության առարկայի համար կարևորագույն նշանակություն ունի:

1.3 Կրակային պատրաստության խնդիրները, կրակային պատրաստության պարապմունքի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան

Կրակային պատրաստությունը մարտական պատրաստության հիմնական առարկաներից է և մոտոհրաձգային ստորաբաժանումների դաշտային մարզվածության բաղկացուցիչ մասը: Նրա նպատակն է՝ ուսուցանել սպառազինությունը մշտական մարտական պատրաստ վիճակում պահելուն, իրենց մարտական խնդիրները ժամանակակից մարտում լուծելու և հակառակորդին խոցելու համար կանխող, արդյունավետ կրակ վարելուն: Թեման ընդգրկում է հիմնականում զենքի հիմնական մասերի, հրաձգության հիմունքների, ձևերի ու կանոնների, մարտի դաշտի հեռավորության որոշման նշանակի հետ գործողությունների կատարման ինչպես նաև հրաձգության վարժությունների կատարման հիմունքները: Ջենքի նյութական մասի ուսուցումը ընդգրկում է զենքի մարտական հատկությունները, մասերի ու մեխանիզմների կառուցվածքը և դրանց նշանակությունը:

Կրակային պատրաստության խնդիրները ներառում են՝

- Ուսուցել հրաձիգին (ավտոմատավորին, գնդացրորդին, նռնականետորդին, դիպուկահարին) մարտավարական բարդ իրավիճակում կրակի ինքնուրույն վարմանը,
- Ուսուցել անձնակազմին ժամանակակից համազորային մարտում ստորաբաժանումների կազմով կրակային խնդիրների կատարմանը,
- Սովորեցնել հրամանատարին հակառակորդի կրակային խոցման կազմակերպմանը և մարտի ընթացքում հաստիքային, տրված և աջակցող ուժերի (կրակային միջոցների) կրակի կառավարմանը:

Բացի այդ, կրակային պատրաստության ուսուցման ընթացքում սովորողների հոգում պետք է սերմանել սեր՝ զենքի, ատելություն թշնամու հանդեպ, ֆիզիկական դիմացկունություն և բարոյահոգեբանական կայունություն:

Ուսուցման նշված խնդիրները կատարելու համար սովորողներին անհրաժշտ է յուրացնել տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ, որոնք էլ բնորոշում են հրաձիգի կրակային վարժվածության մակարդակը և ստորաբաժանումների կրակային ներդաշնակությունը:

Սովորողների մոտ գիտելիքներ, ունակություններ և հմտություններ սերմանելու համար կրակային պատրաստության կառուցվածքը, որպես մարտական պատրաստության առարկա, ներառում է հետևյալ փոխկապված բաժինների ուսումնասիրումը՝

- Ջենքի նյութական մասը և դրա շահագործման կանոնները,
- Հրաձգության վարժածները (գործողություններ զենքով),
- Հրաձգության կանոնները,

- Նշանակետերի հետախուզումը, հրաձգության և նշանացուցման ելակետային որոշումը,
- Ձեռքի նռնակների նետումը,
- Հրաձգության անցկացումը,
- Կրակի կառավարումը:

Կրակային պատրաստության յուրաքանչյուր բաժնի բովանդակությունը որոշվում է ուսուցման ծրագրով, որը ճշգրտվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների, հրաձգության դասընթացի և այլ ուղեցույցների, փաստաթղթերի պահանջներով: Կրակային պատրաստության ուսուցման նպատակին ու խնդիրներին հասնելու համար սովորողները պետք է յուրացնեն մոտոհրաձգային ստորաբաժանումների կրակային պատրաստության մեթոդիկայի գիտելիքները, ունակությունները և հմտությունները:

Դասի ուսումնական նյութը պետք է սերտորեն կապված լինի նախորդ նյութի հետ, հիմնվի սովորողների գիտելիքների և կարողությունների վրա, ապահովի միջառարկայական կապը, հատկապես ֆիզիկայի և մաթեմատիկայի հետ: Պետք է ուշադրություն դարձնել կրակային պատրաստության և մարտավարության միջև եղած սերտ փոխկապակցվածությանը: Սովորողները կրակային պատրաստությունից գիտելիքներ, ունակություններ և հմտություններ ձեռք են բերում ու կատարելագործում դասարանային պարապմունքների, հրաձգային մարզումների, ուսումնական ու ստուգողական հրաձգության, կրակային պատրաստության մրցումների և այլ պարապմունքների ժամանակ: Ուսուցման մեթոդների ընտրությունը պայմանավորված է պարապմունքի թեմայով, նպատակով, բովանդակությամբ, սովորողների պատրաստվածության աստիճանով և այլ գործոններով: Յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում կարող են կիրառվել տարբեր մեթոդներ: Օրինակ՝ հրաձգության վարժածներն ուսուցանելիս (գործողություններ զենքով) կարող են զուգակցվել ցուցադրումը, բացատրությունը և վարժությունը:

Պենմատիկ զենք (հունարեն՝ օդային), օդամղիչ կամ օդաճնշական զենք, ձեռքի ոչ հրագենային զենքի տեսակ, որում գնդակը փողանցքից դուրս է նետվում սեղմված օդի ճնշման ուժով: օդամղիչ հրացանները հիմնականում կրառվում են մարզումային և մարզական հրաձգության համար: Ունի 3 մմ-ից մինչև 5,6 մմ տրամաչափ, լինում է մխոցային և բալոնային: Հրաձգությունը իրականացվում է մինչև 10 մ հեռավորության վրա: Դպրոցներում անհարաժեշտ է անցակցնել օդամղիչ հրացաններով հրաձգության պարապմունքներ: Նախքան պարապմունքը սկսելը զինղեկը պետք է ներկայացնի ինչ է օդամղիչ հրացանը, դրա շահագործման կանոնները, հրաձգության կանոնները, այնուհետև ներկայացնի ավտանգության կանոնները: Օդամղիչ հրացաններով պարապմունքների միջոցով աշակերտների մոտ պետք է ձևավորվել ճիշտ նշանառություն, դիպուկություն:

Ջինդեկը նաև պետք է ներկայացնի աշակերտներին հրաձգությունն ավարտելուց հետո գեկույցը: Օդանդիչ հրացանով մարզումների միջոցով ստիճանաբար պետք է հասնենք այն արդյունքին, որ աշակերտները կարողանան թիրախը խոցել առաջին իսկ կրակոցով: Կրակային պատրաստությունում տեսական գիտելիքներ ձեռք բերելու համար կիրառվում են՝

- Դասախոսության մեթոդը,
- պատմելն ու բացատրությունը,
- զրույցը,
- ցուցադրումը,
- ուսումնական նյութի ինքնուրույն ուսումնասիրումը:

Կրակային պատրաստության յուրաքանչյուր պարապմունք ներառում է՝ *ներածական, հիմնական և եզրափակիչ* մասեր:

Դասարանային պարապմունքի *ներածական մասում* ստուգվում է անձնակազմի ներկայությունը, տեսքը, պարապմունքին պատրաստ լինելը: Այնուհետև անցկացվում է ստուգողական հարցում՝ սովորողների հանձնարարության ինքնուրույն կատարումը ստուգելու և տվյալ պարապմունքի անցած նյութին առնչություններ ստեղծելու նպատակով, որն ապահովում է ուսուցման պարբերականությունն ու հետևողականությունը: Ստուգողական հարցումը կարելի է անցկացնել զրույցի, վարժության մեթոդով՝ գրավոր կամ համակցված: Հարցերը պետք է հարկադրեն սովորողին մտածել սահմանափակ ժամանակի պայմաններում: Այնուհետև կատարվում է վերլուծություն և հայտարարվում գնահատականը: Հարցման տևողությունը չպետք է գերազանցի 10-12 րոպեն: Հարցումից հետո զինկեղը հայտարարում է պարապմունքի թեման, հնարավոր է անցած պարապմունքի բովանդակության հակիրճ հիշեցում՝ թեմաների միջև պատճառահետևանքային կապի հաստատման համար, դրա անհրաժեշտությունը, կոնկրետ ուսումնական նպատակները և պարապմունքի անցկացման կարգը:

Պարապմունքի *հիմնական մասը* ներառում է նոր գիտելիքների և ունակությունների հաղորդումը, այդ գիտելիքների ամրակայումը սովորողների հիշողության մեջ, դրանց կիրառումը գործնականում և յուրացման աստիճանի ստուգումը: Պարապմունքի հիմնական մասի կառուցվածքը պետք է ապահովի ուսումնական նյութի ըմբռնումը և մտապահումը: Ուսումնասիրվող թեմայի ուսումնական հարցերը կամ կատարվող վարժությունները պետք է շարադրվեն հետևողականորեն՝ պարապմունքի ուսումնանյութական միջոցների օգտագործմամբ և պարապմունքի ղեկավարի անձնական ցուցադրմամբ, հետագայում կիրառելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ բացատրությունը, ցուցադրությունը և վարժությունը: Ուսուցման մեթոդների այդպիսի համադրությունը (ցուցադրություն, բացատրություն, վարժություն) խթանում է

սովորողների ճանաչողական ակտիվությունը և նպաստում ուսումնական նյութի իմաստավորված ընկալմանը, այսինքն՝ սովորողները հասկանում են ինչ պետք է անել, ինչպես պետք է անել և ինչու պետք է այդպես անել: Պարապմունքի հիմնական մասի վերջում նպատակահարմար է, որ զինղեկը սովորողների ուսուցման հարցերի յուրացման որակի վերլուծություն կատարի:

Եզրափակիչ մասում ղեկավարը նշում է՝ ինչպես են կատարվել պարապմունքի ուսուցման նպատակները, ովքեր բավականաչափ չեն տիրապետել ուսուցանվող նյութին, ինչ է անհրաժեշտ անել թերությունները վերացնելու համար: Ստացած գիտելիքների և հմտությունների ամրապնդման համար զինղեկը առաջադրանք է հանձնարարում:

Ջինղեկը սկզբում պետք է աշակերտներին բացատրի, որ անվտանգության կանոնների խախտումը զենքի, զինամթերքի հետ աշխատելիս կարող է հանգեցնել դժբախտ պատահարների և նույնիսկ զոհերի: Սովորողներին անվտանգության կանոնները ուսուցանելուց հետո անհրաժեշտ է, որ նրանք ստորագրեն նախօրոք պատրաստված ցուցակներում, որ իրենք գիտեն, ծանոթացել և հրահանգավորվել են անվտանգության կանոններին: Ջենքի ու զինամթերքի նյութական մասն ուսումնասիրվում է, որպես կանոն, դասարանային պարապմունքների ժամանակ՝ ՆՁՊ կաբինետում հետագայում գիտելիքներն ամրապնդվում և կատարելագործվում են գործնական պարապմունքների ժամանակ (հրաձգության մարզումներ): ՆՁՊ կաբինետում գործնական պարապմունքներ անցկացնելիս անհրաժեշտ է կազմակերպել 2-3 ուսումնական տեղ՝ գործողությունները զուգահեռ ուսուցանելու համար: Այդ ուսումնական տեղերի ղեկավարներ նշանակել առավել լավ պատրաստված աշակերտների, որոնց հետ նախապես անհրաժեշտ է անցկացնել մեթոդական պարապմունք:

Ջենքի նյութական մասի ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է՝

- ուշադրությունը բևեռել զենքով գործնական աշխատանքին՝ զենքը քանդելու, հավաքելու, մաքրելու և յուղելու, այն քանդված և հավաքված վիճակում զգնելու, հրաձգությանը նախապատրաստելու և կրակելիս անանխափանություն դիպուկություն ապահովելու, իսկ հրաձգության ժամանակ խափանումներ հայտնաբերելիս՝ դրանց պատճառներն արագ պարզելու և հմտորեն վերացնելու խնդիրներում սովորողների հմտությունը մշակելու նպատակով,
- սովորողների մեջ սերմանել զենքը (սպառազինությունը) օրինակելի և մշտական մարտական պատրաստ վիճակում պահելու պատասխանատվության զգացում:

Ջենքի և զինամթերքի նյութական մասի ուսումնասիրման պարապմունքները նպատակահարմար է սկսել նախկինում ուսուցված թեմաներին համառոտ անդրադարձնալով, որոնք պետք է նպաստեն սովորողների նախապատրաստմանը՝ նոր թեմաներ յուրացնելիս: Պարապմունքների ընթացքում ուսուցման հիմնական մեթոդներն են՝

ցուցադրությունը՝ պարզաբանմամբ, և սովորողների՝ զենքով գործողությունների մարզումները (վարժությունները): Ջենքը, զինամթերքը որպես կանոն, ուսումնասիրվում է ուսումնական նմուշօրինակներով, պաստառների, ուրվագծերի, ինչպես նաև դիաֆիլմերի կիրառմամբ: Պարապմունքի ընթացքում ղեկավարը սովորողներին հայտնում է ուսումնասիրվող զենքի ձեռքի բեկորային նռնակների նմուշօրինակի նշանակությունը, որ ստորաբաժանումն է դրանով սպառազինված, զենքի և զինամթերքի մարտական հատկությունները, ընդհանուր կառուցվածքը և հրաձգության ժամանակ նրանց աշխատանքի սկզբունքը: Ավտոմատը ոչ լրիվ քանդելու և հավաքելու ժամանակ չպետք է մոռալ, որ մենք սովորեցնում ենք

13-14 տարեկան երեխաների, որոնց հասակը 130-140 սմ է, իսկ ձեռքի մատների ուժը երբեմն կարող է չբավականացնել ավտոմատի այս կամ այն մասը անջատելիս կամ տեղադրելիս: Այդ պահերին հարկավոր է օգնել նրանց՝ կատարելու տվյալ գործողությունը:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքում արտացոլված հետազոտության արդյունքները՝ կարող ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումները՝

1. Ներկայումս մենք դժվար ժամանակներ ենք ապրում. «Ռ՝չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» անկայուն իրավիճակում ենք: Դրա համար առաջնային պլանում է գտնվում Հայաստանում զարգացնել նախնական զինվորական պատրաստության առարկայի կրթական որակը դպրոցներում: Քանի որ հայրենիքի պաշտպանը միայն զինվորն ու սպան չեն «հայրենիքի պաշտպան» են աշակերտն ու ուսուցիչը: Սակայն դպրոցներում առարկայի կրթական որակը այնքան էլ չի արդարացնում իրեն: Դպրոցներում զինղեկների դերը պետք է կարևորել, քանի որ միայն որակյալ ուսուցմամբ կարող ենք հակառակորդի նկատմամբ պահպանել գերազանցություն:
2. Հիմնականում աշակերտները չունեն համապատասխան գիտելիքներ ՆՁՊ առարկայից, կարելի է ասել չեն հետաքրքրվում առարկայով: Մեծամասնության մոտ բացակայում է սերը դեպի զենքը, դեպի զինվորական ծառայությունը: Դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան ուսուցանելուց բացի անհրաժեշտ է սովորողների մեջ սերմանել հայրենասիրություն, քանի որ առաջնային է զինվորը՝ իր ոգով, այլ կերպ ասած՝ հաղթելու կամքով, երկրորդը՝ նույն զինվորի կատարելագործվելու կարողությունն է, այլ կերպ ասած՝ մարտական հմտությունը, արհեստավարժությունը, ռազմական, մարտական պատրաստությունը: Երրորդը՝ զինվորի կողմից օգտագործված զենքը կարող է լինել գերժամանակակից կամ հին, սակայն կարևոր է դրա ճիշտ և ժամանակին օգտագործումը, ինչի ուսումնասիրումը սկսվում է դպրոցական նստարանից:
3. ՆՁՊ առարկայի առաջին պահանջը դա յուրաքանչյուր աշակերտի անհատական բարձր պատրաստությունն է, ուստի մեր գլխավոր խնդիրը աշակերտներին ուսուցանելն է, նրանց համապատասխան գիտելիքներով, նվազագույն ռազմական ունակություններով «զինելն» է: Հայրենիքի պաշտպաններ կրթելու դաստիարակելու գործում նախնական զինվորական պատրաստություն առարկան չափազանց կարևոր դեր է խաղում, ուստի մեկ դասաժամը բավարար չէ աշակերտներին փոխանցելու ռազմական գործի այն սկզբնական գիտելիքները, որոնք հետագայում նրանց ծառայության ընթացքում պետք կգան: Գրեթե բոլոր դպրոցները համալրված են ուսումնական զենքերով: Դպրոցներ կան, որտեղ օդամղիչ հրացաններ չկան, իսկ դրա արդյունքում գործնական պարապմունքները այնքան էլ նպատակին չեն ծառայում: Չենք ու ռազմական տեխնիկա ունենալը դեռ քիչ է, պետք է ունենալ նաև դրանք շահագործող բարձրակարգ մասնագետներ, այս ամենին հասնելը պետք է լինի աստիճանաբար, իսկ այդ աստիճանը սկսվում է դպրոցից:

4. Եթե հայրենասիրությունն առաջին հերթին չի համատեղվում զենքի հետ, այդ ազգը կարող է շատ ձեռքբերումներ ունենալ, բայց ոչ... հզոր Հայրենիք:

Առաջարկություններ

Հանրակրթական դպրոցներում կրակային պատրաստության գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով առաջարկվում են մի քանի ուղիներ՝

- Դպրոցները համալրված չեն օդամղիչ հրացաններով առաջարկվում է դպրոցները համալրել օդամղիչ հրացաններով, ինչպես նաև դպրոցներում առանձին դասասենյակում սարքավորել հրաձգարան, օդամղիչ հրացաններով գործնական պարապմունքներ իրականացնելու համար,
- 12-րդ դասարանում իրականացնել գործնական և դաշտային պարապմունքներ, քանի որ 12-րդ դասարանում առարկայի համար դասագրքեր նախատեսված չեն: Գործնական պարապմունքները հնարավորություն են տալիս իրականին մոտ պայմաններում մատուցել նյութը, ցուցադրել պահանջվող գործողությունները, իսկ սովորողներին՝ գործնական վարժանքներով յուրացնել թեման:
- Բարձր դասարաններում գործնական պարապմունքի նորմատիվներ սահմանել և քննություն նշանակել ՆՋՊ առարկայից,
- Հաճախակի կազմակերպել հանդիպումներ պատերազմի մասնակիցների հետ, հաճախակի իրականացնել ռազմամարզական խաղեր, ռազմահայրենասիրական միջոցառումներ, քանի որ եթե բացակայում է սերը դեպի հայրենիքը ինչքան էլ լավ տիրապետեն զենքին, ունենան բավարար ռազմական գիտելիքներ դա մեզ չի օգնի,
- Անհրաժեշտ է դասագրքերի և դպրոցում ՆՋՊ առարկայի կրթական ծրագրերի հիմնարար վերանայում:
- Քանի որ զինղեկը մեծ դեր ունի նախազորակոչային տարիքի երիտասարդներին կրթելու և դաստիարակելու գործում նրա առջև պետք է դրվի խնդիր աշակերտներին տեղեկություններ տալ ինչպես 2020թ. Սեպտեմբերյան պատերազմի մասին այնպես էլ այդ պատերազմում օգտագործված նորանոր զենքերի ու զինտեխնիկայի մասին:
- Դպրոցական ծրագրերում ավելացնել Դրագունովի դիպուկահար հրացանի, ձեռքի գնդացիների մասին տեղեկություններ, քանի որ կրակային պատրաստությունը չի սահմանափակվում միայն Ակ-74-ով և նախազորակոչային տարիքի երիտասարդները բանակ զորակոչվելուց պետք է ընտրեն որևէ ուղղվածություն, այս ամենը կնպաստի առավել հեշտ կողմնորոշվելուն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Օհանյան Վ., Մարգարյան Ս., Առաքելյան Վ., «Նախնական զինվորական պատրաստություն» ուսուցչի ձեռնարկ 8-9-րդ դասարաններ, Երևան-2014, 87 էջ:
2. Օհանյան Վ., Մարգարյան Ս., Առաքելյան Վ., «Նախնական զինվորական պատրաստություն» ուսուցչի ձեռնարկ 10-11-րդ դասարաններ, Երևան-2010:
3. Օհանյան Վ., Մարգարյան Ս., Առաքելյան Վ., «Նախնական զինվորական պատրաստություն» հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, Երևան-2014, 119 էջ:
4. Օհանյան Վ., Մարգարյան Ս., Առաքելյան Վ., «Նախնական զինվորական պատրաստություն» հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք, Երևան-2015, 119 էջ:
5. Օհանյան Վ., Մարգարյան Ս., Առաքելյան Վ., «Նախնական զինվորական պատրաստություն» հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք, Երևան-2010, 111 էջ:
6. Օհանյան Վ., Մարգարյան Ս., Առաքելյան Վ., «Նախնական զինվորական պատրաստություն» հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք, Երևան-2010, 111 էջ:
7. Կապիտան Ղարիբյան Ռ., Ձեռքի նռնակներ, «ՀՀ ՊՆ հրատարակչություն», Երևան-2002, 64 էջ
8. Ավագ լեյտենանտ Մելիքյան Ս. Մոտոհրաձգային ստորաբաժանումների կրակային պատրաստություն, «ՀՀ ՊՆ հրատարակչություն», Երևան-2006, 303 էջ:
9. Կապիտան Մելիքյան Ս. Մոտոհրաձգային (հրաձգային) ստորաբաժանումների կրակի կառավարման մարզումների անցկացման մեթոդիկան, ձեռնարկ, «ՀՀ ՊՆ հրատարակչություն», Երևան-2009,
10. Байрамуков Ю.Б., Янович В.С., Михайлов И.Л. [и др.] ; под общ. ред. Торгованова. Ю.Б. Огневая подготовка : учебник, Красноярск : Сиб. федер. ун-т, 2015г. – 256 с.
11. Банин С. В., Кабардин А. В., Огневая подготовка, "Воениздат" Москва-2014, 416 стр.

Համացանցային նյութեր

1. https://rostec.ru/news/4518085/?sphrase_id=126574
2. www.hayzinvor.am
3. www.arlis.am
4. http://zonwar.ru/news5/news_876-Russian-Pistol-M1848.html